ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«05» մայիսի 2020թ. № 119

## ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 22-Ի ԹԻՎ 97 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝ որոշում եմ.

1. Սպիտակ համայնքի բնակչության սոցիալական պաշտպանության շրջանակներում համայնքի բնակիչներին սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություն տալու համար ստեղծել սոցիալական հարցերի հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ՝

Անահիտ Գյուլազյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար

Հանձնաժողովի նախագահի տեղակալ՝

Արման Ավետիսյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողօգտագործման, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Վեներա Խաչատրյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող

Հանձնաժողովի անդամներ՝

Հենրիկ Միրզոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի պետ

Նորայր Յարմալոյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ – իրավաբան

Միշա Թամամյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ

Մելանյա Դանիելյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Կարինե Լամբարյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնի 1-ին կարգի մասնագետ-գանձապահ

Տիգրան Հակոբյան – Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ)

Վարուժան Սահակյան–Սպիտակ համայնքի ավագանու անդամ (համաձայնությամբ)

Թաղամասերում լիազոր ներկայացուցիչներ – ըստ բնակչի բնակության վայրի

Արտաշես Կարապետյան – Հայկական կարմիր խաչի ընկերության Լոռու մարզային մասնաճյուղի Սպիտակ համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ):

2. Հաստատել սոցիալական հարցերի հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2017 թվականի մարտի 22-ի «Սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով ուսումնասիրություններ կատարելու և եզրակացություն տալու համար հանձնաժողով ստեղծելու և Սպիտակի քաղաքապետի 2015 թվականի մարտի 17-ի թիվ 117 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 97 որոշումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 5

ք. Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
«05» մայիսի 2020թ. թիվ 119 որոշման

# ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
# ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Սույն կարգով սահմանվում են սոցիալական հարցերի հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) գործառույթները և դրանց իրականացման ընթացակարգը:

2. Հանձնաժողովը պարտավոր է իր գործառույթները իրականացնել Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը համապատասխան:

3. Հանձնաժողովը իրականացնում է Սպիտակ համայնքում բնակվող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց կյանքի և բնակարանային պայմանների ուսումնասիրություն և տալիս եզրակացություն:

4. Հանձնաժողովը ուսումնասիրությունն իրականացնում է Սպիտակ համայնքի ղեկավարի հանձնարարությամբ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի դիմումի հիման վրա կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, իրավաբանական և այլ ֆիզիկական անձանց ներկայացրած տեղեկությունների, գրավոր և բանավոր դիմումների, ահազանգերի, զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների հիման վրա:

5. Հանձնաժողովը սոցիալական աշխատողի և այլ անդամի մասնակցությամբ (առնվազն երկու անդամ) հանձնարարականը ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է տնային այցելություն, իրականացնում ուսումնասիրություն և կատարում կարիքի գնահատում: Անհրաժեշտության դեպքում տնային այցելությանը կարող է մասնակցել հրավիրված համապատասխան մասնագետը:

6. Տնային այցելության ընթացքում ուսումնասիրվում են կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի կենսապայմանները՝ ընտանիքի կազմը, եկամտի չափը և տեսակը, ծախսերի կառուցվածքը, անշարժ և շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի առկայությունը, կենցաղային պայմանները, ընտանիքում առկա խնդիրները, միջանձնային հարաբերություններն ընտանիքում, նախկինում ստացած օժանդակությունները, սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-աշխատանքային, սոցիալ-իրավական խնդիրների առկայությունը կամ բացակայությունը, սոցիալական կարիքները կամ դրանց բացակայությունը:

7. Տնային այցելության ուսումնասիրության արդյունքները և համապատասխան փաստաթղթերը 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալին՝ հանձնաժողովի նիստին քննարկելու նպատակով:

8. Հանձնաժողովի նախագահը, իսկ նրա բացակայության դեպքում՝ հանձնաժողովի նախագահի տեղակալը յուրաքանչյուր ամիս առնվազն մեկ անգամ հրավիրում է հանձնաժողովի նիստ, որի մասին հրազեկվում է այն անձը (այսուհետ՝ շահառու), որի վերաբերյալ կատարվել է ուսումնասիրություն:

9. Հանձնաժողովի նիստ կարող է հրավիրվել նաև ըստ անհրաժեշտության:

10. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է անդամների կեսից ավելին:

11. Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի նախագահի բացակայության դեպքում նիստը նախագահում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

12. Հանձնաժողովի նիստը արձանագրում է հանձնաժողովի քարտուղարը:

13. Հանձնաժողովի նիստին հանձնաժողովի քարտուղարի բացակայության դեպքում հանձնաժողովի նախագահը նշանակում է հանձնաժողովի քարտուղար նիստին ներկա անդամներից:

14. Հանձնաժողովի նիստի ընթացքում քննության են առնվում ուսումնասիրության արդյունքում ձեռք բերված փաստաթղթերը և տեղեկությունները շահառուի վերաբերյալ:

15. Հանձնաժողովի նիստին շահառուի մասնակցության պարագայում հանձնաժողովը լսում է նրա կարծիքը:

16. Հանձնաժողովի տրամադրության տակ եղած փաստաթղթերը և տեղեկություններն ուսումնասիրելուց հետո հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության մասին:

17. Լրացուցիչ ուսումնասիրության անհրաժեշտության դեպքում հանձնաժողովի նիստը հետաձգվում է:

18. Հանձնաժողովի եզրակացությունն ընդունվում է հանձնաժողովի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

19. Ձայների հավասարության դեպքում որոշիչ է հանձնաժողովի նախագահի ձայնը:

20. Հանձնաժողովի նիստի վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որն իր մեջ ներառում է հանձնաժողովի եզրակացությունը:

21. Հանձնաժողովի նիստի արձանագրությունը ստորագրում են հանձնաժողովի նիստին մասնակցած անդամները:

22. Հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի նիստի արձանագրությունը և նիստի ժամանակ ուսումնասիրված փաստաթղթերը հանձնաժողովի նիստից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է համայնքի ղեկավարին համապատասխան որոշում ընդունելու համար:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Ա. ԳՅՈՒԼԱԶՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2020 թվականի N 120

# ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՏԵՐԱՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, Սպիտակ համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ, Հայրենական Մեծ պատերազմի հաղթանակի 75-ամյակի կապակցությամբ, հիմք ընդունելով սոցիալական հարցերի հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 5-ի թիվ 1 արձանագրությունը, Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին սոցիալական աջակցության նպատակով՝ *որոշում եմ.*

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ ծառայություններ» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից հատկացնել 150 000 ՀՀ դրամ, որից՝

1) Պրոկոֆի Հակոբի Հակոբյանին (անձնագիր՝ AN0769098, տրվ.25.12.2013թ.052-ի կողմից) 75 000 ՀՀ դրամ,

2) Հրաչիկ Արտեմի Աջամյանին (անձնագիր՝ AG0568194, տրվ. 23.05.2006թ. 052-ի կողմից) 75 000 ՀՀ դրամ,

2.Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ. ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 6
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«06» մայիսի 2020թ. № 121

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 5-ի թիվ 1 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2020 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսական և եկամուտների հավաքագրման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 6
ք.Սպիտակ

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2020թ. մայիսի «6» թիվ 121 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոց. քարտի համարը | Անձնագրային տվյալները | Գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Ալինա Բդոյան | 7509679098 | 004414827, տրված 28.11.2014թ., 052-ի կողմից | 50 000 |
| 2 | Նվարդ Քարամյան | 6812690090 | 002712172, տրված 04.04.2014թ., 052-ի կողմից | 20 000 |
| 3 | Թինա Յարմալոյան | 5808930073 | AT0489558, տրված 08.10.2019թ., 052-ի կողմից | 10 000 |

Ընդամենը՝ 80 000 (ութսուն հազար) ՀՀ դրամ

Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Գյուլազյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մայիսի 2020թ. № 122

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Ս.Ավետիսյան փողոցի վրա գտնվող 06-006-0517-0017 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,00443 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Ս.Ավետիսյան փողոց, թիվ 386» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մայիսի 2020թ. № 123

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Գրիգոր Լուսավորիչ թաղամասում գտնվող 06-006-0188-0093 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,12798 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Գրիգոր Լուսավորիչ թաղամաս, թիվ 48» հասցեն:

2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մայիսի 2020թ. № 124

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Նորիկ Աճեմյան փողոցի վրա գտնվող 06-006-0271-0010 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,01385 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Նորիկ Աճեմյան փողոց, թիվ 106» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«07» մայիսի 2020թ. № 125

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «ա» ենթակետով և 48-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 1-ի թիվ 1054-Ն որոշումը և «Արտյոմ Սաքանյան» ԱՁ-ի կողմից տրված անշարժ գույքի չափագրման հաշվետվությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Երևանյան խճուղու վրա գտնվող 06-006-0185-0001 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,09996 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության խառը կառուցապատման գործառնական նշանակության հողամասին տրամադրել «ք.Սպիտակ, Երևանյան խճուղի, թիվ 95» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 7
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 2020թ. № 126

## ՔԱՋԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրանտո Գարեգինի Հակոբյանի մահից հետո Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի վկայագրի փոխանցվել է Քաջիկ Գրանտոյի Հակոբյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Քաջիկ Գրանտոյի Հակոբյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

3. Քաջիկ Գրանտոյի Հակոբյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Տեր-Սիմոնյան փողոցի վրա գտնվող 0,108 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Տեր-Սիմոնյան փողոց, թիվ 160» հասցեն:

4. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 11
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«11» մայիսի 2020թ. № 124

## ԿԱՐԵՆ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի «գ» ենթակետով և 48-րդ կետով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարտուն Հովհաննեսի Դունամալյանի մահից հետո Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող անշարժ գույքը ըստ օրենքի ժառանգության իրավունքի 2019 թվականի ապրիլի 17-ի վկայագրի փոխանցվել է Կարեն Հովհաննեսի Դունամալյանին, սակայն անշարժ գույքին նախկինում հասցե չի տրամադրվել, հիմք ընդունելով Կարեն Հովհաննեսի Դունամալյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Կարեն Հովհաննեսի Դունամալյանին ժառանգաբար փոխանցված՝ Սպիտակ համայնքի Այգեստան փողոցի վրա գտնվող 0,095 հա մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել «քաղաք Սպիտակ, Այգեստան փողոց, թիվ 281» հասցեն:
2. Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

Գ.ՍԱՀԱԿՅԱՆ

2020թ. մայիսի 11
ք.Սպիտակ